

ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Չկա Հասարակության
անանց իրավունքի
Ubi societas ibi jus

Ե Ր Կ Ն Ա Ր Ա Ք Ա Ք Ե Ր Ք
Քիվ 16 (19)
2007 թ. դեկտեմբերի 15



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՎԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ 60 ՏԱՐԵԿԱՆ Է

ՄԱԿԻ ԳԼԽԱԿՈՐ ԶԱՐՏՈՒՄ ՊԸՆ ԳԻ ՄՈՒՆԻ ՈՒՂԵՐԶԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱԿ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՐ



Յի թարգմանվել այդքան շատ լեզուներով: Այն հիմք է հանդիսացել բազմաթիվ նորանկախ պետությունների և ժողովրդավարական երկրների սահմանադրությունների համար՝ դառնալով չափանիշ, որով որոշվում է մեր հարգաքնն այն ամենի հանդեպ, ինչն ընկալում ենք կամ պետք է ընկալենք որպես ճշմարիտ կամ ոչ ճշմարիտ:

2007 թ. դեկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների օրը, մեկնարկում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման վաթսուհինգերորդ ամյակի տարին: ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրները մասնակցելու են հռչակագրում ամրագրված արդարության և իրավահավասարության սկզբունքների տարածմանն ուղղված քարոզարշավին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սարսափներն ապրած աշխարհում հռչակագրով առաջին անգամ որպես ճշմարտություն հռչակվեց բոլոր մարդկանց ներհատուկ արժանապատվության ու հավասարության մասին:

Հռչակագրի հեղինակների բացառիկ խորաթափանցությունն ու վճռականությունը թույլ տվեցին ստեղծելու մի փաստաթուղթ, որում առաջին անգամ շարադրվեցին մարդկային հանընդհանուր և անհատական իրավունքները:

Հռչակագիրը հրատարակվել է ավելի քան 360 լեզուներով, ինչը վկայում է դրա համընդհանուր բնույթի և ընդգրկվածության մասին. աշխարհում ոչ մի այլ փաստաթուղթ

Այսօր էլ հռչակագիրը նույնքան կարևոր է, որքան իր ընդունման պահին, սակայն դրանում ամրագրված հիմնարար ազատությունները դեռևս իրականություն չեն դարձել յուրաքանչյուրի համար: Հաճախ կառավարությունները չեն դրսևորում անհրաժեշտ քաղաքական կամք՝ կենսագործելու իրենց կողմից այդքան պատրաստակամորեն ընդունված միջազգային չափանիշները:

Այս հորեյանական տարին մեզ հնարավորություն է տալիս ամրապնդելու այդ կամքը, իրավունքների պաշտպանությունը դարձնելու իրականություն, որպեսզի ամենուր բոլորը գիտակցեն դրանց կարևորությունը՝ օգտվելով դրանցից:

Թող մեկնարկող տարին ոգեշնչի մեզ այս նպատակի իրագործման ճանապարհին: Դարձնենք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը յուրաքանչյուր մարդու կյանքի անբաժանելի մասը:

2007 թ. դեկտեմբերի 10

ԴԱԳ ՇԵՄՐՇՅՈՒԴ

ՄԱԿ-ի երկրորդ գլխավոր ֆարսուղար 1953-1961 թթ.



Համընդհանուր հռչակագիրը... որպես բոլոր ժողովուրդների ու ազգերի առջև դրված նպատակ, ոչ միայն բյուրեղացնում է մեր ժամանակների քաղաքական միտքը այդ խնդիրների շուրջ, այլ... ազդում է նաև ամբողջ աշխարհի օրենք նախագծողների որոշումների վրա:

Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր ՈՒ Մ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում	էջ 2
Վանաձորի կենտրոնում կհառնի Մարդու իրավունքների հայկական դպրոցը՝ որպես տարածաշրջանային կրթական կենտրոն	էջ 3
Ռ. Մովսիսյան. «Ձևավորենք քաղաքակիրթ վերաբերմունք կենդանիների նկատմամբ»	էջ 4
Հաշմանդամների գործազրկությունն օրակարգային խնդիր է	էջ 5
Հերմինե Բաբոյան. «Հաշմանդամները հասարակության լիիրավ անդամներ են»	էջ 5
Մորի Թառոյան. «Սարոյանական լինելիության խորհուրդը»	էջ 6
Ընթերցողների հարցերին պատասխանում են Տեր Շմավոն քահանա Ղևոնդյանը և Տեր Շահե քահանա Չայրապետյանը	էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ	էջ 8

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

ԱՄՆ

Կոնգրեսի նախաձեռնությունն ընդդեմ խոշտանգումների

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Մարդու իրավունքների և իրավական հարցերով հանձնաժողովի նախագահ Դիք Մարթին ուղևորում է ԱՄՆ կոնգրեսի երկու պալատների քայլերն ուղղված Կենտրոնական հետախուզական վարչության կողմից հարկադիր հարցաքննության դատան մեթոդների գործարարումն արգելելուն:

«Դրանք պարզապես խոշտանգումների մեթոդներ են, որոնք խախտում են Մարդու իրավունքների ոլորտում Միացյալ Նահանգների ստանդարտ միջազգային պարտավորությունները և բացարձակապես անհամատեղելի են մեծ ժողովրդավարության հետ»:

Այս համատեքստում պարոն Մարթին, դատապարտելով Կենտրոնական հետախուզական վարչության կողմից անարժեքության մեջ կասկածյալների՝ հարկադրանքի միջոցներով ուղեկցված հարցաքննությունների ծայրագույնությունների ոչնչացումը, նշել է. «Որպես նախկին դատախազ՝ ապացույցների ոչնչացումը համարում եմ անօրինական գործողություն: Կարավարության կողմից գաղտնիքների բացթողումը դատական կամ խորհրդարանական հետաքննությունից խուսափելու նպատակով, շատ տարածված է և ոչ միայն Միացյալ Նահանգներում»:

Որպեսզի մարդու իրավունքները պաշտպանված լինեն, իսկ անարժեքության դեմ պայքարը լինի վտահեղի ու արդյունավետ, դատարանները և խորհրդարանները պետք է լիարժեքորեն իրականացնեն իրենց պարտականությունները»:

ՉԻՆԱՍՏԱՆ

1.25 բիլիոն դոլար շահույթ՝ երեխաների շահագործումից

Չինաստանի Կրթության նախարարության կողմից իրականացվող «Աշխատանք և ուսում» ծրագրերի շրջանակներում արքայա շրջանների դպրոցներում եկամտաբեր գործունեություն է ծավալվում բուլցեստային պակասորդը լրացնելու նպատակով: Ըստ Կրթության նախարարության պաշտոնական վիճակագրական տվյալների՝ ավելի քան 400.000 միջնակարգ և տարրական դպրոցներ՝ նախատեսված 12-16 տարեկան երեխաների համար, ընդգրկված են գյուղատնտեսական և արդյունաբերական նախագծերում: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2004 թ.-ին «Աշխատանք և ուսում» ծրագրերից ստացված հասույթը կազմել է ավելի քան 10 բիլիոն յուան (1.25 բիլիոն դոլար):



Չինաստանի օրենսդրությանը արգելված է 16 տարեկան և ցածր տարիք ունեցող երեխաների շահագործումը՝ որոշ վերապահումներով, օրինակ սպորտի կամ արհեստագործության ոլորտում երեխաներին թույլատրվում է աշխատել, եթե «մասնագիտական վերապատրաստումը» և «կրթական աշխատանքը» չեն սպառնում նրանց առողջությանը ու անվտանգությանը: «Աշխատանք և ուսում» ծրագրերի կանոնակարգի համաձայն՝ արգելվում է վտանգավոր աշխատանքը, և ընդգծվում «կրթության առաջնահերթությունը», սակայն աշխատանքի ծանրաբեռնվածության կամ տնտեսության մասին հստակ սահմանումները բացակայում են:

«Աշխատանք և ուսում» ծրագրերի բերի կանոնակարգումը և թույլ վերահսկողությունը հանգեցրել են համակարգում դպրոցների և գործատուների կողմից մանկական աշխատանքի համառոտ շահագործման: Անգամ 12 տարեկան երեխաներին են վարձում գյուղատնտեսական ծանր և շինարարական վտանգավոր աշխատանքներում, շատերին շաբաթներով կամ ամիսներով ուղարկում տեղական գործարարներին՝ «ամառային աշխատանքների» անուններով աշխատածամանակի, աշխատանքային վտանգավոր պայմանների, ցածր աշխատավարձի, ինչպես նաև առողջության և անվտանգության

հարցերը և կրճատելով ուսման ժամաքանակը մինչև շաբաթական ընդամենը մի քանի ժամ:

«Կատարությունը պետք է անհապաղ դադարեցնի այն ծրագրերը, որոնք վտանգի են ենթարկում երեխաներին»,- խնդրին արձագանքել է Մարդու իրավունքների դիտակը:

Մինչդեռ Չինաստանի ժողովրդական Հանրապետությունն ստորագրել է ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին միջազգային համաձայնագիրը և Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 182 համաձայնագիրը, որոնցով արգելվում է երեխաներին վտանգող և նրանց կրթությունը խոչընդոտող աշխատանքների կատարումը:

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանի ստրուկները Լիբանանի խայտառակությունն են

Վերջերս ֆրանսիական վավերագրական մի ֆիլմ «Լիբանանը՝ ստրուկների երկիր» վերնագրով, հատորեն դատապարտել է Լիբանանի հասարակությանն ու իշխանություններին՝ վտարանդի տնային ծառայողների նկատմամբ դատան վերաբերմունքի համար: Մինչդեռ իրենց համաքաղաքացիների վարքագիցը վրդովվելու վրիպարեն շատ լիբանանցիներ վրդովմունք են արտահայտել ֆիլմը նկարահանած խմբի դեմ, որը համարված է ֆրանսիական արտասահման



վարքագիցը վրդովվելու վրիպարեն շատ լիբանանցիներ վրդովմունք են արտահայտել ֆիլմը նկարահանած խմբի դեմ, որը համարված է ֆրանսիական արտասահման

իրենց եղբի՛նակությունը:

Երկու շաբաթ առաջ Մարդու իրավունքների դիտակը մի գեկույց է հրապարակել՝ շրիվանցային այն 100 վտարանդի տնային ծառայողների հետ ունեցած զրույցների հիման վրա, որոնք Շրի Լանկա էին վերադարձել Մեծավոր Արևելքում, այդ թվում՝ Լիբանանում աշխատելուց հետո: Վերջիններս ասարտեցնող պատմություններ են պատմել իրենց գործատուների բիրտ վերաբերմունքի և Լիբանանի իշխանությունների անտարբերության մասին:

Լիբանանի գործատուներն առգրավել էին աշխատողների անձնագրերը՝ նրանց օրական 24 ժամ բանտարկելով աշխատավայրում և հաճախ արգելելով նույնիսկ գաճախարել հարազատների ու ընկերների: Իսկ որոշ գործատուներ ամիսներով, նույնիսկ տարիներով հրաժարվել էին աշխատավարձ վճարել:

Նադիմ Գուրի

Լիբանանում Մարդու իրավունքների դիտակի փորձագետ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ուղերձը ՄԻԱԿ/ՉԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա առթիվ

«2007 թ. ՄԻԱԿ/ՉԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա՝ դեկտեմբերի 1-ի հիմնական թեման նախաձեռնողականությունն է, առանց որի հնարավոր չէ հաղթահարել այս համաճարակը:

ՉԻԱՀ-ը մի հիվանդություն է, որը մեծ չէ որևէ այլ հիվանդության. այն սոցիալական, տնտեսական և մարդու իրավունքների խնդիր է: Այս հիվանդության նկատմամբ զգալի են հատկապես կանայք: Այն նույնիսկ ազդեցություն է թողնում հասարակության վրա, ինչպես ՄԻԱԿ-ը թուլացնում է դիմադրողականությունը, նվազեցնում կենսագործունեությունը, խոչընդոտում զարգացումը և սպառնում կայունությանը»:

Մինչդեռ մենք ունենք վարակը կանխելու միջոցներ, պատշաճ խնամք և աջակցություն ցուցաբերելու հնարավորություններ:

Այս ոլորտում շոշափելի է եական առաջընթաց է նկատվում, բայց ավելին է անհրաժեշտ: Չնայած նորագույն տվյալները փաստում են, որ ՄԻԱԿ-ի տարածման մասշտաբները համաշխարհային մակարդակով չեն ընդլայնվել, սակայն վիճակագրությունը դեռևս սահմանելուցից է: Կարևորագույն խնդիրն այն է, որ յուրաքանչյուրի համար երաշխավորվեն ՄԻԱԿ-ի կանխարգելման և բուժման միջոցներ, խնամք ու աջակցություն՝ անկախ բնակության վայրից և ինքնուրույնից»:

Եզրափակելով խոսքը՝ գլխավոր քարտուղարն ասել է. «Անկախ կյանքում ունեցած մեր դերից, բնակության վա-

ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐ

Դեկտեմբերի 18 - Վտարանդիների միջազգային օր

Դեկտեմբերի 19 - Չարագող երկրների միջև համագործակցության օր

Դեկտեմբերի 20 - Մարդկային համերաշխության միջազգային օր

րից մենք ինչ-որ ձևով առնչվում ենք ՄԻԱԿ-ին, ուստի բոլորս պետք է պատասխանատու լինենք դրա դեմ միջոցներ ձեռնարկելու համար»:

2007 թ. դեկտեմբերի 1

Պան Գի Մուևի ուղերձը կամավորների միջազգային օրվա կապակցությամբ

Դեկտեմբերի 5-ը կամավորների միջազգային օրն է, որի առթիվ իր ուղերձում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մուևը բարձր է գնահատել այն միլիոնավոր մարդկանց ջանքերը, ովքեր կամովին իրենց ժամանակն են նվիրում և ուժեր ներդնում՝ արքայության հարթահարման, շրջակա միջավայրի բարելավման և ՄԱԿ-ի գործունեության շրջանակներում այլ նպատակների իրագործման համար: Նա նշել է, որ հաճախ նրանց ջանքերը անտեսվում են:

Գլխավոր քարտուղարը նշել է, որ ժամանակակից համընդհանուր խնդիրների լուծման անհրաժեշտությունը պահանջում է կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության սերտ համագործակցությունը:

«Կամավորներն անմիտխարհիկ դեր են կատարում այս գործընթացներում, մինչդեռ կամավորական գործունեության կարևորագույն ներդրումը դեռևս հավիտյալ պատշաճ չի գնահատվում»,- հայտարարել է Պան Գի Մուևը:

2001 թ. հիմնվել է ՄԱԿ-ի կամավորների ծրագիրը, որի շրջանակներում ամեն տարի հազարավոր մարդիկ տարբեր երկրներից աջակցում են կազմակերպությանը՝ երկրագնդում խաղաղության և բարգավաճման հասնելու համար:

ԱՖՐԻԿԱ

Ռուանդայում արգելվել է մահապատիժը

Գաբոնի հետ Ռուանդան նույնպես միացավ մահապատիժն արգելված ՄԱԿ-ի անդամ երկրների ճնշող մեծամասնությանը: Այս մասին Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Լուիզ Արբորը տեղեկացրեց ժնևում կայացած Մարդու իրավունքների խորհրդի 6-րդ նստաշրջանի ընթացքում:



Տիկին Արբորը խոսեց նաև Շրի Լանկա կատարած իր վերջին այցելության մասին ուշադրությունը կենտրոնացնելով վերջին երկու տարիների ընթացքում մարդկանց՝ տաճապահարույց չափերի հասած առևանգումների և անհետացումների խնդրի վրա: Նա նշեց նաև ԱՖրիկայում կատարած իր առաջին այցելության մասին մտահոգությունը հայտնելով երկրում կանանց իրավունքների ոլորտում դանդաղ առաջընթացի վերաբերյալ:

Գերագույն հանձնակատարը խորհրդի ուշադրությունը հրավիրեց նաև Սուդանում մարդու իրավունքների և միջազգային իրավաբանների շարունակական խախտումների վրա, որոնք մեծ թիվ են կազմում հատկապես պատերազմից ավերված Դարֆուրի շրջանում:

Գերագույն հանձնակատարը շեշտեց, որ Կառավարությունը և միջազգային հանդուրդները պետք է հրատապ քայլեր ձեռնարկեն քաղաքացիներին պաշտպանելու ուղղությամբ:

ՎԱՆԱՉՈՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿՀԱՌՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ՝ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՐԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Վանաձոր քաղաքի տարածքում, ներառյալ՝ կենտրոնական պողոտայի վրա, դեռևս կան երկրաշարժից քանդված շենքերի ազատ տարածքներ: Վանաձորցիները թերևս հիշում են կենտրոնական պողոտայի թիվ մեկ հասցեում գտնվող նախկին

Հենց այս դպրոցն է լինելու այն հիմքը, որի շնորհիվ պետք է իրականացվի Մարդու իրավունքների գիտելիքների տարածումը: Մարդիկ կհամանան այն, ինչն օրենքով, սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության իրավաբանական փաստաթղթերով տրված է նրանց, հաջողությամբ կապաշտպանեն իրենց իրավունքները, հաջողությամբ կմասնակցեն Հայաստանում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացներին:

Սերգեյ Կապիճոս

շենքը, որը բանդվեց երկրաշարժից հետո: Եվ ահա Լոռու մարզպետը և Վանաձորի քաղաքապետը ընդառաջեցին Հայկական սահմանադրական իրավապաշտպան



ՎԱՆԵՐԻ ՏԿԱՉՈՒԿ

կենտրոնի առաջարկին ու այդ տարածքը հատկացրին Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի կառուցման համար: Այսպիսով՝ նույն տարածքում կկառուցվի մի շինություն, որը որպես ճարտարապետական կառույց անկասածն կլինի

մարդկանց համար՝ հիշեցնելով նախկին գեղակերտ շինությունը: Նախաձեռնության կենսագործման ուղղությամբ արվող առաջին քայլերը երկար սպասեցնել չույժեցին:

2007 թվականի դեկտեմբերի 11-ին Մարդու իրավունքների օրվա առթիվ միջոցառումների շրջանակներում Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի 1 հասցեում տեղի ունեցավ «ԱՅՍՏԵՂ ԿԿՄՈՒՄԳԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾԵՆՔ» ցուցանակի բացման հանդիսավոր արարողությունը:

Հյուրերին ողջունելով՝ ՀՍԻԿ նախագահ Գևորգ Մամուկյանը շնորհակալություն հայտնեց նրանց, ովքեր օժանդակում և մեծ աշխատանքներ են իրականացնում ՄԻՀԴ շենքի կառուցման ուղղությամբ՝ ասելով. «Մենք հավատում ենք, որ Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին իրենց բաժին քարը կդնեն շատ-շատերը: Հանրապետության վարչապետը, ով մի քանի օր առաջ՝ երկրաշարժի տարելիցի օրը, Լոռու մարզում էր, խոստացավ, որ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը նույնպես անպայմանորեն կօժանդակի այս ծրագիրը»:

Սիրելի վանաձորցիներ, լավ գիտե՛ք, որ շատերի ընտանիքները, հարազատները աշխատանք գտնելու համար պանդխտության մասնապարհ են բռնել: Այս ծրագիրը կղկված է շտկելու այդ վիճակը: Ուզու՛մ ենք շտկել այդ վիճակը, ուզու՛մ ենք, որ Վանաձորում կառուցվի մի այնպիսի շինություն, հիմնարկի մի այնպիսի հաստատություն, որի շնորհիվ հարյուրավոր բարձրակարգ մասնագետներ չեն գնա Երևանում աշխատելու, այլ իրենց մասնագիտական բարձր ունակությունները դրսևորելու հնարավորություն կունենան նաև այստեղ՝ Վանաձորում:

Երբ տասներկու տարի առաջ ՀՍԻԿ-ը ձևակերպում էր իր երազանքը, իր հեռանկարը, այն ստացվեց այսպես. սիրո և հանդուրժողականության սկզբունքներով ապրող աշխարհ, ուր տիրում են իրավունքն ու արդարությունը:

Մենք հավատում ենք, որ Մարդու իրավունքների հայկական դպրոցը, այստեղ կառուցվելով, լինելու է արդարության մի դպրոց, լինելու է մեկ այդպիսի մեր հանրապետության քաղաքացիական հասարակության շենքերից:

Մենք նաև հավատում ենք, որ Մարդու իրավունքների հայկական դպրոցը լինելու է խաղաղության փարոս և արդարության մարմնացում, արդարություն պիտի սփռի իր շուրջը և պիտի նպաստի մեր երկրի զարգացմանը, և հատկապես աշխարհագրորեն անհավասարաչափ աշխարհում»:

որոնք անհավասարաչափ այս զարգացումը կմեղմանան»:

Ծրագրին ու մասնակիցներին իր օրհնությունն ու ողջույնի խոսքը բերեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քուզարաց թեմի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը:

Այնուհետև ծայրը տրվեց Լոռու մարզպետ ԱՐԱՄ ՔՐԶԱՐՅԱՆԻ, ով մասնավորապես սասց:

«Մեծարգո դեսպան, Պեռաշնորհ Տեր, հարգելի հյուրեր: Այսօր մենք պատիվ ունենք գտնվելու Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի ցուցանակի բացման արարողությանը, որը շատ խորհրդանշական իմաստ ունի, այն է, որ ձեզ հետ միասին փաստում ենք մի իրողություն, որ այս վայրում պետք է կառուցվի Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքը»:

Գ. Մամուկյանի աշխատակազմն անցած գրեթե երկու տասնամյակի ընթացքում սպասցուել է, որ իր գերագույն նպատակը



«Սա շատ լավ նախաձեռնություն է, կաջակցե՛ք այս նախաձեռնությանը, քանի որ այն ամենն, ինչ վերաբերում է կրթությանը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների կրթությանը, մշտապես եղել է և կմնա կարևորագույն խնդիր, ուստի հենց այս դպրոցը կարող է լինել այն հիմնաքարը, որով կապահովվի ուսուցիչների վերապատրաստման գործընթացը, նախագծերի իրագործումը: Նշված գործընթացներն իրագործվելու են այս դպրոցի հիմքի վրա: Մենք պետք է աջակցե՛ք՝ աշխատելով թե՛ Կառավարության, թե՛ ոչ պետական կազմակերպությունների հետ»:

այն է, ինչ կարող է զարգանալ ներքևից. ժողովրդավարությունն արհեստականորեն այլ հիմքի վրա դնել հնարավոր չէ: Ժողովրդավարությունն այն է, ինչը կարիք ունի պարզապես ազգային հողի վրա գարգանալու՝ միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ և աջակցությամբ»:

Պեռաշնորհ Տեր, հարգելի հյուրեր: Այսօր մենք պատիվ ունենք գտնվելու Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի կառուցման նախաձեռնությունը՝ ասելով. «Այս վայրում, համոզված եմ, որոշ ժամանակ անց կգործի մի ունիկալ դպրոց, առանց չափազանցությունների են ատում ունիկալ այն առաջինն է Հայաստանում, և հույս ունեմ՝ դրան կհաջողվեն մասնագործիկ այլ ծրագրեր: Այս ծրագրի առանձնահատկությունն ու կարևորությունն այն է, որ դրանով Հայաստանում կարողանալու ենք Մարդու իրավունքների և ժողովրդապետության կանոնները իրականացնելու հարցերով պատասխանատու

Սիրվիա Պարուչյան ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի Մարդու իրավունքների հարցերով պատասխանատու

հասարակության իրավական գիտելիքների, նաև սեփական իրավունքներին իրագրության բարձրացումն է՝ ի տարբերություն Մարդու իրավունքների հարցերով զբաղվող շատ և շատ այլ կազմակերպությունների:

Վատահ են, որ հետախույս ևս ՀՍԻԿ-ը կարողանա իր գործունեությունն այս դաշտում՝ համագործակցելով ինչպես իշխանությունների, տարբեր միջազգային կազմակերպությունների, այնպես էլ հասարակության լայն շերտերի հետ»:



ՍԵՐԳԵՅ ԿՄՊԻՆՈՍ

ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի ղեկավար, դեսպան ՍԵՐԳԵՅ ԿՄՊԻՆՈՍԻ ելույթը

«Փողը-ինչ խոսեն մեր գրասենյակի ծրագրի մասին: Չգիտեմ՝ ինչպես են իրականացվում մասնօրինակ ծրագրերը մյուս միջազգային կազմակերպություններում, բայց մենք աշխատում ենք Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ համագործակցելով՝ ԵԱՀԿ-ի երեք «զամբույլների» ուղղությամբ: Դրանք են՝ ռազմաքաղաքական, էկոլոգիական-տնտեսական և հումանիտար:

Թե ինչու ենք ընտրել Վանաձորը, բացատրել շատ հեշտ է այստեղ կան մարդիկ, ովքեր կարող են զբաղվել մարդու իրավունքների հարցերով: Այստեղ կա նախաձեռնություն, և մենք անհրաժեշտ ենք համարում պաշտպանել այս նախաձեռնությունը, քանի որ ժողովրդավարությունն

ունի պետական կառավարումը, յուրաքանչյուր երկրի զարգացումը դաժանում է ավելի դիմաձիկ, ավելի նպատակալաց և ավելի համապարփակ: Մի՞նչո՞ք բոլորը չէ, որ գիտեն, թե ինչ են Մարդու իրավունքները:

ՉԵՎԱՎՈՐԵՆՔ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՎԵՐԱԳՐԵՐՄՈՒՆՔ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ

Քաղաքակիրթ երկրներում ոչ միայն կենդանիների պաշտպանության օրենքներն են գործում, այլև ի պատիվ կրանց՝ հուշարձաններ են կանգնեցնում: Օրինակ՝ Փարիզում գտնվում է Բարի անունով տեսերեսարարային ջան արձանը, որը կայծրորում է մտաբանական կյանքի շուրջ քաղաքային մարդկային կյանքը, Բեռլինում՝ կոլոնիալ ռուլե-օդո շան արձանը, Նոմա՝ կյանքային, լծվածի «սառնակ» Բալայի, որը համաձայնաբեր ժամանակ վարակազերծող շինվածքի մասնակիցն է հասցրել էր մասնավոր գյուղ, Իտալիայում՝ Սան-Ռեմո-Լորենցոյում է գտնվում Յավաթոսի արձանը, որ 14 տարի շարունակ ամեն երեկո համարոնել գնում էր երկաթուղային կայան՝ պատերազմում զոհված տիրոջ գտնելու հույսով, իսկ Շոտլանդիայում՝ Երկուբուրգում, արձան է կանգնեցված այն ջան համար, որը տիրոջ մահից հետո 5 տարի շարունակ ասարել է նրա ջիրիմի մոտ:

Արևմուտքի ֆինանսավորման շնորհիվ վերջին տարիներին Հայաստանում բազմաթիվ հասարակական կազմակերպություններ ձևավորվեցին, այդ թվում՝ բնապահպանության և կենդանիների պաշտպանության հարցերով զբաղվող: Եվրոպայի խորհրդի Հայաստանին առաջարկում բազմաթիվ պահանջներից մեկը կենդանիների նկատմամբ դաշան վերաբերումների վերաբերումն է: Սակայն փոխվել է արդյոք որևէ բան մեզանում, դարձե՞լ ենք արդյոք ավելի քաղաքակիրթ, արդյո՞ք կենդանիների նկատմամբ կարեկցանք է արբանցել մեր հոգում, թե՞ դեռևս ունակ չենք իրագործել մեզ «պարտադրված» մարդկային կոմունիզմի դիմում-իդուլ-նը:

Տարիներ առաջ տեղի ունեցած մի դեպք է մնացել իշխողության մեջ: Դեռևս երեսնամյակ տարված էին խաղերով, երբ մեծահասակները մանուկներին հորդորեցին թաքնվել, փոքրիկներն ակամա թաքնվեցին ցանախան հետևում: Այդ պահին մի տղամարդ

կանչեց իր շրջապագերը շանը, որ մեղավոր տեսքով, հնազանդ մոտեցավ տիրոջը: Վերջինս շրջապեց նրան: Երբ բոլորը հեռացան, և շունը մենակ մնաց, կրակոցներ լվեցին: Երեսնամյակը ցախատան ճեղքերի միջից հետևում էին կատարվածին: Վիրավոր շունը ոչ մի կերպ չէր ուզում զոհվել, բայց կարճ շրջան փրկության ոչ մի հնարավորություն չէր թողնում: Երբ, վերջապես, կրակոցները դադարեցին, հետաքրքրասերների անբուխ գոյացավ սպանված շան շուրջը: Հաշվում էին շան արմատոթ վերքերը:

Ինչու՞: Ո՞րն էր դաշան հաշվեհարդարի պատճառը: Պարզվեց, որ անշահախաս մի տղա, համոզված լինելով իր անպատեհիության մեջ, հալածել էր շանը, որ շրջապագերը լինելով՝ հարձակվել էր իրեն ծանակողի վրա: Տարիներ են անցել, դեպի ականատես երեխաները հատուկ մարդիկ են դարձել, իսկ ի՞նչ հետք է թողել այդ սպանողի տեսարանը նրանց հոգիներում:

Մի այլ առիթով տեսա, թե ինչպես են տասնուամյակները տարեկան տղաները քարկոծելով շուն սպանում: Ինչու՞ սպանեցիք շանը՞ հարցին ամենշունչներից մեկը, գործնական կեցվածք ընդունելով, պատասխանեց. «Արդեն մեռ էր, վատ էր տեսնում, դժվարությամբ էր շարժվում, հայրս սասց՝ տարեք և սպանեք»:

Երբեմն էլ ընտանի կենդանիներին մորթելիս շրջակայքում աղեկտուր մի-երեք են տարածվում: Հարկ է լինում բարձրացնել հեռուստացույցի կամ ռադիոընդունիչի ձայնը՝ խլացնելու այդ միջերը: Դեռևս ոչ վաղ անցյալում քաղաքի գիշերային անդորրը պարբերաբար խախտվում էր կրակոցներով. քաղաքապետարանի կարագործությամբ ոչնչացնում էին թափառող շներին: Երբեմն էլ պատահաբար գնդակահա-

րում էին նաև բակային շներին: Որտեղի համար եղանակ է, իսկ սիրելի շան տիրոջ համար՝ Շների ոչնչացման համար պատասխանատու պաշտոնյայի հետ զրուցելու առիթ ունեցա կրթած շան փնտրելիս: Ի՞նչ տեղեկացրին, որ սպանված կենդանիների դիերը գետնում են Արցուխ գյուղի մոտ գտնվող աղբաբափման վայրում՝ աղբը լցնելով առվափոսը և ծածկելով հողով: Երբ եղա այդ աղբաբափման վայրում, բանվորներն ինձ ասացին, որ ոչ մի շուն այդտեղ չեն բերում, և տեսնվել է չկա փոս փորելու համար: Հարց է ծագում. այդ դեպքում որտե՞ղ են գետնում սպանված շների մարմինները: Տարիներ առաջ Դարպաս գյուղի մոտակայքում՝ հեղեղատի մեջ էին բափում շների մեթած դիերը: Մինչդեռ պատասխանատու պաշտոնյաներին և որսորդներին լսելիս թվում է՝ նրանք խորապես մտահոգված են բնության անաղարտության և մարդկանց անվտանգության հարցերով:

Իսկ ինչպես կենդանիներ են սպանվում ճանապարհներին՝ վարորդների՝ թույլատրելի արագությունը գերազանցելու պատճառով հայտնվելով մեթածայի անվտանգության տակ, իսկ դիերն օրեր շարունակ կենդանիները կենդանիներին ծանալարների վրա սանիտկեցուցիչ տեսարաններ ստեղծելով:

Ամիրաժեշտ է, որ մարդիկ արթնանան անտարբերության միտքից: Ի վերջո, նրանք պետք է հասկանան, որ մարդկային քաղաքակիրթ հասարակարգն արդեն քանոնկեղծող դար է քակոխել: Պետք չէ սպասել, մինչև մեծերը կպահանջեն ոչ միայն կենդանիների նկատմամբ բիրտ վերաբերման կիրառելու օրենքներ ընդունել, այլև կիրառել դրանք:

ՈԱՅԱՅԵԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄԱՐՂՈՒ ԻՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԵՎԱՍՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ



ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը իրապարակել է անցած շուրջ 11 ամիսների ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների, դրանց հիման վրա՝ խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ:

Ամփոփ վիճակագրություն: Նշված ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել 3465 դիմումներ, որոնցից 999-ը՝ գրավոր:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված գրավոր դիմումների ուսումնասիրության արդյունքում կայացվել են տարբեր որոշումներ, ընդ որում՝ դրական են վճռվել 82-ը, որի շնորհիվ վերականգնվել են 325 անձանց խախտված իրավունքները:

Ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ ներկայացված գրավոր դիմումների վիճակագրության՝ ամենաշատ թվով դիմումներ են ներկայացվել Երևանի քաղաքապետարանի (1156), ոստիկանության (139), դատարանների (127), դատախազության (96) գործուներությունից դժգոհ դիմումատու անձանցից:

Ըստ խախտված իրավունքների տեսակի՝ վիճակագրական տվյալները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում խախտվում են ամառվապես Մարդու իրավունքների հետևյալ տեսակները՝ բավարար կենսամակարդակի, բնակարանի և կենսապայմանների բարելավման իրավունք (202), օրենքով չարգելված և այլուր իրավունքներ չխախտող գործողությունների ազատության իրավունք (190), իրավական պաշտպանության (152), սեփականության իրավունք (127) և այլն:

Ստացված դիմում-բողոքների վիճակագրությունն ըստ մարդերի պարզում է, որ ամենաշատ թվով դիմումներ են ներկայացվել Երևանից (656), Լոռու մարզից (68), Կոտայքի մարզից (56): Իրավունքների վերականգնման ակնկալիքով Մարդու իրավունքների պաշտպանին են ակնալինել նաև մեր հասարակության խոցելի խմբերը՝ փախստականներ, հաշմանդամներ, սոցիալապես նախաինո խավեր և այլն:

Մնում է հուսալ, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բարելավման և հասարակության իրավագիտակցության բարձրացման շնորհիվ հնարավոր կլինի հասնել նրան, որ երկրում այլևս չխախտվեն մարդկային, հասակապես՝ երեսներին անկարող իրավունքները, կամ խախտված իրավունքները հնարավոր լինի վերականգնել առանց խաչընդունների և օրենքի ուժով:

Գ. ՄԵԼՈՒՄՅԱՆ
Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար

Պարզարևում Երևանի քաղաքապետարանից

«Իրավական մշակույթ» երկաթաբեթի 11-րդ համարում տպագրվել էր դեռասանուկի Մարինե Մխիթարյանի «Մթափվենք, հարգենք և պաշտպանենք մեր իրավունքները» վերնագրով հոդվածը, որում հեղինակն անդրադարձել էր Երևանի ներքաղաքային երթևեկային ծանրաբեռնվածության հետևանքով տիրող վիճակին: Թերթի 11-րդ համարը կից նամակով ուղարկելով Երևանի քաղաքապետին՝ խնդրել էինք պատասխանել ընթերցողի հարցադրումներին:

Մտորև տպագրում ենք Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Մելքոնյանի ատորագրությամբ պատասխան նամակը՝ ի գիտություն հեղինակի և ընթերցողների:

Հարգելի՛ պարոն Մանուկյան

«Իրավական մշակույթ» երկաթաբեթի 11-րդ համարում տպագրված «Մթափվենք, հարգենք և պաշտպանենք

մեր իրավունքները» վերնագրով հոդվածը քննարկվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունում:

Լիովին կիսելով հոդվածի հեղինակի մտահոգությունը Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի աշխատանքում անկա հիմնախնդիրների առկայությանը՝ հարկ ենք համարում տալ համապատասխան պարզաբանումներ ներկայացված հարցադրումների կապակցությամբ:

Երևան քաղաքի ազգաբնակչության տրանսպորտային սպասարկումը բարելավելու, մատուցվող ծառայությունների մակարդակը բարձրացնելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից վերջին տարիներին որդեգրված ռազմավարության համաձայն նախատեսվել է ավելացնել մեծ տեղատարողության տրանսպորտային միջոցների (ավտոբուս, տրոլեյբուս) քանակը ներքաղաքային երթուղիներում և դրան զուգահեռ աստիճանաբար կրճատել ներկայումս շահագործվող միկրոավտոբուսների քանակը (մոտ 2 ավտոբուս):

Հարկ ենք համարում մշել, որ 2005 թ.-ից

սկսած՝ այդ ուղղությամբ արդեն տարվել են զգալի աշխատանքներ: Մասնավորապես 2005-2007 թթ. ընթացքում մայրաքաղաք է ներկրվել թվով 201 ուկրաինական «Քոզրան» մակնիշի և թվով 20 ռուսական արտադրության «ՊԱՁ-32054» մակնիշի նոր ավտոբուսներ, որոնք ներկայումս շահագործվում են ներքաղաքային երթուղիներում, ինչի արդյունքում որոշակիորեն բարելավվել է մայրաքաղաքի ազգաբնակչության տրանսպորտային սպասարկման վիճակը: Ընթացիկ տարվա դեկտեմբեր ամսվա սկզբին մասնավոր կազմակերպությունների կողմից մայրաքաղաք է ներկրվել «Քոզրան» մակնիշի ավտոբուսների նոր խմբաքանակ (20 հատ), և առաջիկայում կկազմակերպվի դրանց շահագործումը ներքաղաքային երթուղիներում:

Ավտոբուսների ձեռք բերման աշխատանքները շարունակվելու են առաջիկա տարիներին, և նախատեսվում է դրանց քանակը հասցնել մոտ 700 միավորի:

Ինչ վերաբերում է հոդվածում մշված վերջերս գյուղական տրանսպորտային անմշակ հարցին, սպա տրոլեյբուսները չեն վերաբեցվել, այլ, ընդհակառակը, աշխատանք-

ներ են տարվում մայրաքաղաքի վերգետնյա էլեկտրատրանսպորտի զարգացման, մասնավորապես՝ տրոլեյբուսային պարկի համալրման ուղղությամբ: Այսպես՝ ընթացիկ տարում մայրաքաղաք են ներկրվել թվով 18 նոր, ռուսական արտադրության «ԼԻԱՁ» մակնիշի տրոլեյբուսներ, որոնք շահագործվում են ներքաղաքային երթուղիներում: Բացի այդ՝ նախատեսված է առաջիկա չորս տարիների ընթացքում ձեռք բերել ևս 80 հատ նոր տրոլեյբուսներ (տարեկան 20 հատ):

Միաժամանակ հայտնում են, որ մայրաքաղաքի հասարակական տրանսպորտում անկա հիմնախնդիրները գտնվում են Երևանի քաղաքապետարանի ղեկավարության ուղղությամբ կենտրոնում, և տարվում են կոնկրետ աշխատանքներ դրանց լուծման ուղղությամբ:

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ Է

Դեկտեմբերի 3-ին մշակվում է հաշմանդամների միջազգային օրը: 1992 թ. ՄԱԿ-ի Հաշմանդամների տասնամյակի ավարտին (1983-1992 թթ.) Գլխավոր վեհաժողովը դեկտեմբերի 3-ը հայտարարեց Հաշմանդամների միջազգային օր: Այդ տասնամյակը եղել է իրազեկության բարձրացման, հաշմանդամների վիճակի բարելավման ու նրանց համար հավասար իրավունքների հավասարմանն ուղղված միջոցների ձեռնարկման ժամանակաշրջան:

Հաշմանդամների միջազգային օրվա առթիվ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Սահմանափակ հնարավորություններով մարդկանց աշխատանքի իրավունքը» գեկույցում սակավ է, որ չնայած բոլոր քանքանքին՝ շատ երկրներում հաշմանդամներն այդպես էլ աշխատանքային հավասար պայմաններով չապահովվեցին և շարունակում են մնալ հասարակությունից մեկուսացված: Այսօր աշխարհում

չուրք 650 մլն հաշմանդամներ կան, այսինքն՝ երկրագնդի յուրաքանչյուր 10-րդ բնակիչը: 470 մլն հաշմանդամներ աշխատունակ տարիքի մարդիկ են, բայց նրանց կեսից ավելին գրկված են աշխատունի հնարավորությունից:

Ենկույցում հիշատակվում է նաև, որ շուրջ 426 մլն հաշմանդամներ ապրում են աղքատության պայմաններում:

Օրինակ՝ Ռուսաստանում գործազուրկ է հաշմանդամների շուրջ 70%-ը, Իսպանիայում՝ 66%-ը:

Ենկույցում առանձնացվում են այն խնդիրները, որոնց առնչվում են սահմանափակ հնարավորություններով մարդիկ. ցածր վարձատրվող աշխատանք, կառավարման հանակարգում անհրաժեշտ ներկայացուցչության բացակայություն, տրանսպորտային միջոցներից և ազատ տեղաշարժման հնարավորություններից օգտվելու դժվարություններ, հասարակության, աշխատակիցների և գործատուների կամենակալ վերաբերմունք:

«ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

2007 թ. դեկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների օրվա առթիվ երևանի «Կոնգրես» հյուրանոցում կայացավ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լրմեն Հարությունյանի հրավիրած քննարկում-սեմինարը, որին մասնակցեցին համար իրավիրվել էին երկրի բարձրաստիճան պաշտոնյաներ, մի շարք հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Մարդու իրավունքները և հայաստանյան իրողությունները» խորագրով քննարկումը նախաձեռնել է կազմակերպել եր ԳՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի (ԵԱԳԿ) աջակցությամբ՝ Հայաստանում մարդու իրավունքներին առնչվող առկա հիմնախնդիրներին ու դրանց պատճառների քննարկման նպատակով:

Քննարկման ընթացքում ելույթ ունեցան ԵԱԳԿ ղեկավար, Հայաստանյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կասպիրով, ՄԱԿ-ի մշտական համակարգող Կոնստանտին Վիդալ-Քրուսը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լրմեն Հարությունյանը, Հայաստանի Հեղինակյան կոմիտեի նախագահ Ալեկսի Իշխանյանը:

Քննարկման ավարտին «Շրջակա միջավայրի իրավական պաշտպանության կենտրոնի» նախագահ Արդա Իսկոյանը ելույթ ունեցավ՝ «Մարդու էությունը հավասար է իրավունքներով, ձեռնարկում, զարգացում և ներկա վիճակը ՀՀ-ում» թեմայով, որին հաջորդեցին հարց ու պատասխաններ, քննարկում:

ՀԱԻԿ-Ը՝ ՈՎԿՀ-Ի (CONGO) ԼԻԻՐԱՎ ԱՆԿԱՄ

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնին նամակով շնորհավորել է խորհրդատվական կարգավիճակ ունեցող ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի ծրագրերի պատասխանատու Աննա Մատևրեն Սոլունը՝ վերոնշյալ համաժողովի լիիրավ անդամ դառնալու կապակցությամբ: Նամակում մասնավորապես ասվում է.

«Սրտանց ողջունում են Ձեզ, Ձեր աշխատակիցներին և կազմակերպությանը Միավորված ազգերի կազմակերպությանը խորհրդատվական կարգավիճակ ունեցող ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի (ՈՎԿՀ) լիիրավ անդամ դառնալու կապակցությամբ: Այնպես, թե Ձեր մասնակցությունը համաժողովի գործունեությանը և երկարամյակ անգործակցությունը Միավորված ազգերի կազմակերպությունում ոչ կառավարական կազմակերպությունների դերն ուժեղացնելու գործում:

Ի պատասխան Ձեր խնդրանքին՝ մենք հաճույքով կուղարկենք բազմաթիվ տեղեկատվական բերիկներ ՈՎԿՀ-ի գործունեության և ՄԱԿ-ի ծրագրերին ներգրավվածության և համընդունակ վերաբերյալ: Ձեր կազմակերպությունը շուտով կընդգրկվի մեր կայքէջում և ՈՎԿՀ-ի անդամների առանց հասցեագրում: Հետագայում կատանաք նաև խորհրդի համընդունակներին և Գլխավոր վեհաժողովին մասնակցության հրավերներ, որոնք բաց են անդամ կազմակերպությունների ներկայացուցիչների համար, և միայն լիիրավ անդամներն ունեն ձայնի իրավունք: www.ngocongo.org կայքէջում կատանաք լիարժեք տեղեկատվություն ՈՎԿՀ-ի համընդունակների, ՄԱԿ/ՈՎԿ միջոցառումների վերաբերյալ և ՄԱԿ-ին առնչվող բազմաթիվ հղումներ:

Սիրով ակնկալում են հանդիպել Ձեզ և ներտրոնք համագործակցել Ձեր կազմակերպության հետ»:

Լակազյան մարտնչությունը
ՍԵՆՍ ԼՈՒՐԻՆ ՍՈՒՆԸ
Շրագի պատասխանատու

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼԻԻՐԱՎ ԱՆԿԱՄՆԵՐՆ ԵՆ

«ՀՀ տարբեր բնակավայրերում ականատես են ակնհայտոր ենք եղել հաշմանդամ մարդկանց՝ իրենց իրավունքների անիրավաբար խախտման և դրա հետևանքով այդ իրավունքների խախտման վիճակներ: Գրեթե բոլոր համայնքներում բնակիչները դժգոհում են, որ այդիկինքներն են հաշմանդամություն կարգ սահմանելու դիմաց ապօրինիբար գումար են պահանջում»:

Այս խնդիրն է բարձրաձայնում «Իրավական մշակույթ» երկաքարաբերի ընթերցող Դիանա Բախյանը՝ առաջարկելով իրազեկության բարձրացման, այն է՝ կայուն իրավագիտակցության ձևավորման շնորհիվ հասնել նրան, որ սահմանափակ հնարավորություններով մարդիկ կարողանան պաշտպանել իրենց իրավունքները, կանխեն դրանց խախտումները:

մապատասխան վերաբերմունքի միջոցով «մեղմել» իրավախախտումների պատճառած դժվարություններն ու մարդկային ցավը:

Հասարակության հետ անկախյանը հարողակցության ապահովման միջոցները են նաև թեքահարթակները, որոնց տեղադրումն օրակարգի խնդիր է Հայաստանում: Թեքահարթակների բացակայությունը գրկում է հաշմանդամների ազատ տեղաշարժվելու հնարավորությունից՝ խախտելով մարդկանց կենսագործունեության միջավայրի մատչելիության իրավունքը, որին տրամաբանորեն հետևում են մարդկային այլ իրավունքների խախտումները, ինչպես օրինակ՝ կրթության, աշխատանքի, բուժօգնության և այլն: Այս առնչությամբ ՀՀ օրենսդրության մեջ՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում, նախատեսվում է՝ «կենսագործունեության միջավայրի մատչելիության ապահովում» հաշմանդամների կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու նպատակով և նրանց կարիքները հաշվի առնելով՝ բնակելի և հասարակական շենքերի, փողոցների, բժշկական, արտադրական, ուսումնական, մշակութային, մարզական և այլ շինությունների նախագծումը, կառուցումը և վերակառուցումը, ինչպես նաև հասարակական տրանսպորտի միջոցների հարմարեցումը» (հոդ. 2):

Հարկ ենք համարում մշել, որ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 147-Լ հրամանով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձբարվածության պետական ծառայություն» գործակալությունը պարտավոր է պայմանագիր կնքել զբաղվածության մարզային կենտրոնի և գործատուի միջև՝ աշխատանքային փոխհատուցման մասին: Սույն պայմանագրով գործատու պարտավորվում է անմրցունակ անձանց հետ ՀՀ աշ-

խատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան աշխատանքային պայմանագիր կնքել նվազագույնը մեկ տարի ժամկետով, իսկ առաջին և երկրորդ խնդիրը հաշմանդամների հետ՝ երկու տարի ժամկետով: Սրա նպատակն «աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման քանակության նպատակով

տուներ դժվարանց գտնել, բայց մի՞թե «իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ունենալու» ցայտուն օրինակներ չեն հաշմանդամների խնդրաշյալ իրավունքների սահմանափակումները:

Դեկտեմբեր ամսին իրավապաշտպան Լրմեն Հարությունյանը և մտավոր ներուժ ունեն ներդրելու ի նպատակ հաշմանդամներին և սահմանափակ հնարավորություններով մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունը հաշմանդամների հանդեպ երբեք ոչ պատշաճ վերաբերմունք ամենուրեք պարտավորվում է:

ՀՀ օրենսդրությամբ և մարդկային խղճի հրամայականով փաստենք, որ սահմանափակ հնարավորություններով մարդու իրավունքների պաշտպանության և հաստատության չեն զիջում ոչ ոքի, սակայնակա ֆիզիկական և մտավոր ներուժ ունեն ներդրելու ի նպատակ հաշմանդամներին և սահմանափակ հնարավորություններով մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունը հաշմանդամների հանդեպ երբեք ոչ պատշաճ վերաբերմունք ամենուրեք պարտավորվում է:



Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների խախտումների բազմաթիվ դեպքերի մասին վկայում են թե տուժած անձինք,

թե ողորտուն կատարված ուսումնասիրությունների փնտնագրական տվյալները: Ոչ ոք չի ժխտում, որ Աստծո և օրենքի առաջ հավասար են բոլոր մարդիկ, բայց և գրեթե յուրաքանչյուր ոք գերթ չի մղում այլոց իրավունքների վրա բռնաճակով, ազատությունները սահմանափակելուց, երբեմն նաև՝ «ակամա» մնչելուց:



Դիանա Բախյանը

Եթե փորձենք անձան առանց ուսումնասիրությունների և անփորձ վիճակագրության պարզել, թե որքանով են մեք երկրում պաշտպանված սահմանափակ հնարավորություններով մարդիկ, ամենիշատակ պարզ կդառնա, որ, ըստ էության, հաշմանդամների իրավունքները ոչ միայն ըստ պատշաճի չեն պաշտպանվում, այլև գրեթե փորձ չի արվում գտնել հասարակական հա-

սահմանափակ հնարավորություններով մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունը հաշմանդամների հանդեպ երբեք ոչ պատշաճ վերաբերմունք ամենուրեք պարտավորվում է:

արժանապատիվ կողմից տրվող աշխատավարձի փոխհատուցման հետ կապված հարաբերությունների կարգավորումն է:

Սինդրոմ Հայաստանի Հանրապետությունում վերոնշյալ օրենքը սահմանում է, որ «հաշմանդամներն ունեն Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և օրենքներով սահմանված նույն իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես այլ անձինք» (հոդ. 3): Սույն հոդվածով սահմանվում է նաև, որ հաշմանդամների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ունենալու համար մեղավոր պաշտոնատար անձինք և քաղաքացիները ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով: ՀՀ օրենքներն այսպես են սահմանում, սակայն իրականությունում այլ է. գուցե այսպես ձևակերպված հոդվածով սահմանված իրավունքների խախ-

յաստանի զարգացման, բարգավաճման: Հանախ գործատուները չիմնավորված անվտանգության են ընդունում աշխատանք որոնող հաշմանդամներին, թեքահավաքները վերաբերմունք նրանց աշխատունակությանը, մինչդեռ պարզապես անհրաժեշտ է հրաժարվել «հաշմանդամությունը մատնանշելու» արատավոր տվյալներից:

Հարկավոր է հավասար նրանք ուժերի՝ դրանով առաջընթաց բայլ կատարելով դեպի առավել բարգավաճի, ժողովրդավարական և օրինական պետական համահարգ ու հասարակության: Սա ոչ միայն կոչ է, այլև Աստծո պատվիրաններով և պետական օրենսդրությամբ սահմանված հիմնարար իրավունքների պաշտպանության պարտաճի հիշեցում:

ՀԵՐՍԻՆԵ ԲԱՌՈՒՅԱԼ

ՄՇԱԿՈՒՅՑ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Երիցս իրավացի էր Պարոյն Սևակը, երբ գրում էր. «Սարոյանը օժտված է մի այնպիսի ծիրով, որ շատ քչերն են ունենում» մարդկանց սիրելու դժվարագույն տաղանով: Նա մարդկանց չի դատապարտում, այլ սիրում է նրանց: Նրա երկերը լեցուն են հագար ու մի գրկանքներով, և նրա հերոսները հագար ու մի գրկանքներով են կրում, բայց այս ամենը ջերմացած է սրտի մի այնպիսի կրակով, որ ապրել են ուզում և ոչ թե մեռնել, փառաբանում են կյանքը և ոչ թե անհիմուն...» («Հիշարժան տարեթվեր», 1988, թիվ 3, էջ 85):


Սարոյանը գիտեր, որ այս խելահեղ ու ծուռ աշխարհում շիտակ ապրելն անհնար է, սակայն արարեց իր հրաշալի կերպարներին...

Եվ կանգնած սարոյանական աշխարհի, նրա կերպարների պատկերաբանի առաջ՝ քեզ զգում են սարոյանական աշխարհի հպարտ լեռներում, ուր ոչ մի արարած, ոչ մի մարդկային չեղ ցարկացավ, այլ միայն սայթաքեց, երբեմն ընկավ, սակայն ելավ ու շարունակեց քայլել...

Այս հողերեն աշխարհից հեռացած մեր կաթնահունց իրիկնահացի երգիչ Հանն Սահյանը կարող էր ասել՝ «ձեր մասերնին են», սակայն այդ ինչ անմեծանիլ ուժերից էր սնվում Սարոյան-գեղարվեստ ու անհատականությունը: Հանսյան են խորհել իրենց արմատներից պոկված հայրողիների մասին և գարնանալով գարնանցել նրանց հող-գեղերկրային հզորության վրա: Հայրենի աշխարհի կարոտն ու հիշողությունը նրանց կարող էին ոգևորել, թե՛ միայն ցավ

ՍԱՐՈՅԱՆԱԿԱՆ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

պատճառով:
Իմ մտապատկերներում սփյուռքահայ գրողը մնան է այն բույսին, որի արմատները հողում չեն թաղված:



«Ես Կալիֆորնիայի հայ եմ, Փարիզի հայ եմ, Լոնդոնի հայ եմ, Երևանի հայ եմ, ամեն տեղ հայ եմ».- իրավունք ուներ ի լուր աշխարհի արդարակելու մեծ գրողը ու հայրողին: Մի այլ առիթով Սարոյանն ասել է. «Ես հայ եմ, և դուք գիտեք, թե ինչ դժվարին և միաժամանակ ինչ հրաշալի բան է այդ: Իր լինելիության պարզ ու իմաստուն խորհուրդն է թաքցնում այս մկրտական խոստովանության մեջ: «Հայ ժողովրդի ազնվու-

թյունը, քաջությունը, ուշիմությունը, հեզքելու և սրամտելու շնորհը ժառանգությունն են բոլոր ճշմարիտ հայերի: Դրանք սնուցել են իմ կյանքը, ու ես երախտապարտ եմ դրա համար: Ես պարտական եմ ամեն բանի համար այն անպատմելիին, որ մեր յուրաքանչյուրի ներսում է, և որը գալիս է յուրաքանչյուրի արմատից, հողի մի մասից, մշակույթի մի մասից: Իմ պարտքը Հայաստանի և հետևաբար՝ բոլոր հայերի հանդեպ անհաշվելի է, անչափելի է, վիթխարի է»:

Ինձ թվում է՝ հայրենի եզերքից պոկված մեր հայրենակիցները հայրենիք այցելելուց հետո օտարության մեջ կրկնակի են գգում իրենց որոշությունն ու ցավը. չէ՛ որ կարոտն անկեղ մորենու մնան այրում է ներսից, մինչդեռ Տերն ու մեր հայրերի հավատն են նրանց կենդանի պահել ու շարունակում են պահպանել: Պատահական չէ, որ մեր շատ հայրենակիցներ հեռավոր երկրներում իրենց տան մի անկյունում մկրտական մատուցներով ստեղծում են մի արտաչափ երկիր-մոլորակ:

Սարոյանական համարի աղբյուրներից մեկը թաքցնված է նրա մեծ սիրո մեջ. «Գրող պետք է սիրահարված լինի այս աշխարհին, այլապես չի կարող գրել: Իմ գործն

ապրելն է: Գրելը ապրել է նշանակում... Իմ ողջ էությունը վճռակամ է, և բարձր, և ուժեղ, և ավելի տարածություն ունի, քան կյանքը...»:

Սարոյանական բարոյությունը թույլ չէ. այն հզոր հոգու հորդահոս, ամեն ինչ լույսով ողողող ակունքից է գալիս:

... Փնտրի բարին ամենուրեք ու երբ գտնես, դուրս բեր թաքստոցից, և թող նա լինի ազատ ու աներկուր: Արթնացրու առաջինությունը, ուն սրտում էլ այն գարունի ու տրտուն թաքցվելիս լինի աշխարհի սարսափներից ու անոթից... Սարոյան բարձր ու ցածրը չկա: Եվ քանի դեռ ապրում են, ոչ մի բան չավելացնես աշխարհի արժեքներին ու տխրությանը, այլ ժպտա կեցության անձայր խնդրության ու զարկներից հանդեպ: Ես հավատում եմ մարդու բարոյությանը: Հավատում եմ, որ մարդու ճակատագիրն ազդիլ ճակատագիր է: Ատում եմ այն ուժերը, որ փորձում են կաշկանդել, բնաջնջել մարդու ազնվությունը: Բարի ծոված մարդիկ արժանի են այս աշխարհից ավելի լավ աշխարհի...

ՍՈՒՐԻ ԹԱՌՈՒՅԱՆ

ՎԱՆԱԶՈՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿՀԱՌՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ՝ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

էջ 3

Բոլորը չեն գիտակցում դրանց կապը ընտրությունների և այն բարդ սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական խնդիրների լուծման հետ, որոնք առկա են այս կամ այն երկրում: Սարդիկ այդ խնդիրները չեն կապում կենցաղային, սոցիալական և այլ բնույթի անձնական խնդիրների հետ, մինչդեռ դրանք փոխկապված երևույթներ են: Առանց այդ իրավունքների գիտակցման՝ հնարավոր չէ դրանք պաշտպանել:

Դեռ այս դպրոցն է լինելու այն հիմքը, որի շնորհիվ պետք է իրականացվի Մարդու իրավունքների գիտելիքների տարածումը: Սարդիկ կիմանան այն, ինչն օրեն-

Ցանկանում են շեշտել, որ այս նախագծի զարգացումը ծնվել է վաճառորդան հողի վրա, և սա թերևս պատահական չէ: Պետք է արժանին մատուցել պարուն Գ. Մանուկյանին:

Մեր խորին համոզմամբ, ժողովրդավարացումը բարդ գործընթաց է, որը հնարավոր չէ ծառի մնան փոխադրել մի երկրից մյուսը:

Ժողովրդավարացման և Մարդու իրավունքների բարելավման գործընթացները տարբեր երկրներում տարբեր են: Դա կախված է շատ գործոններից՝ և պատմական ժառանգությունից, և մշակույթից, և մարդկանց կրթվածության աստիճանից, նաև նրանից, թե որքանով են գիտակցում Մարդու իրավունքների և իրենց երկրի նվաճումների կապը: Կախված է նաև իշխանությունների աջակցությունից: Մենք ակնկալում ենք Հայաստանի իշխանությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությունն այս կարևորագույն նախաձեռնության իրականացման ճանապարհին: Իսկ մեր կողմից լիարժեք աջակցություն ենք երաշխավորում: Հույսով են՝ մնան ծրագրեր կիրականացվեն նաև Հայաստանի այլ վայրերում»:

և սա պատահական չէ: Պատահական չէ նաև այն, որ Մի-ՀԳ շենքի ցուցանակի բացման հանդիսավոր արարողությունը հաջողվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման օրվան, մի փաստաթուղթ, որ բարձրանված է ավելի քան 300 լեզուներով»:



ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի նախագահ Վազգեն Սաչյանը ևս շեշտեց այն կարևորագույն հանգամանքը, որ հիմնադրվող դպրոցը, ըստ էության, ԱՊՀ տարածաշրջանում առաջին մասնագիտակ դպրոցն է: «Գերագույն հաճույք և մեծ պատիվ է այստեղ գտնվել:

Հայաստանի Հանրապետությունն ԱՊՀ երկրների մեջ դեռևս միակ երկիրն է, որտեղ Մարդու իրավունքները՝ որպես առանձին առարկա, դասավանդվում են նաև հանրակրթական դպրոցներում:

Փաստորեն, Վանաձորը դառնում է իրավապաշտպանության կենտրոն, և սա պատահական չէ:

Այսօր բոլորս ներկա ենք մի գեղեցիկ արարողության, որը դպրոցի կառուցման հիմք է դնում, սակայն որպես երևույթ՝ շատ ավելի մեծ է:

Ինչպես աշխարհը, այնպես էլ Հայաստանը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո, իհարևե, շատ է փոխվել. արժանազորվել են թե՛ հաջողություններ, թե՛ մարտահարվածներ:

Վստահ են՝ այս նախաձեռնությունը կնպաստի, որ Հայաստանում Մարդու իրա-

վունքների պաշտպանությունն էլ ավելի խորանա, զարգանա, և առկա մարտահրավերները նվազեն: Նախաձեռնության կարևորությունը նաև այնտեղ է, որ ներդրված է հասարակական հատվածը՝ ի դեմս Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի: Նշեն նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանության հարցը ՀՀ Կառավարության օրակարգում գերակա խնդիր է»:

Իր ողջույնի խոսքում Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը հավատեց, որ վերջին 12 տարիների ընթացքում հենց Գ. Մանուկյանն է ջանքեր եղողը այս նախաձեռնության, ծրագրի իրականացման համար: Քաղաքապետը ցավով նշեց, որ Վանաձորում բազմաթիվ քաղաքացիներ իրազեկ չեն իրենց իրավունքներին:

Ս. Դարբինյանը հույս հայտնեց, որ դպրոցի կառուցումը ևս մեկ քայլ կլսան մեր երկիրը դեպի իրավական պետության ստեղծում:



քով, սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության իրավական փաստաթղթերով տրված է նրանց, հաջողությամբ կպաշտպանեն իրենց իրավունքները, հաջողությամբ կսանձակեն Հայաստանում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացներին:

ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Հայաստանի գրասենյակի ղեկավար Վալերի Տկաչուկն իր խոսքում նշեց, որ դպրոցն իր տեսակի մեջ լինելու է բացառիկ: «Փաստորեն, Վանաձորը դառնում է իրավապաշտպանության կենտրոն,



Մարդու իրավունքների հայկական դպրոցի առաքելությունն է՝
 հասարակության իրավական դաստիարակությունը:

The Mission of the Armenian Human Rights School is
 legal upbringing of the society.



**ԻՄ ԲԱՉԻՆ ԲԱՐԸ
 ՄԻՆՉ ԶԵՆՔԻՆ**

**MY SHARE OF STONE FOR THE
 AHRS building**



Սիրելի բարեկամ

Բոլորիս քաջ հայտնի է, որ Հայաստանը աշխարհագրորեն խիստ անհավասարաչափ է զարգացած. վարչական, կրթական, մշակութային բոլոր հաստատությունները կենտրոնացված են մայրաքաղաք Երևանում, որի հետևանքով դժվարին պայմաններում են հայտնվել մարզերը:

Հարյուրավոր, հազարավոր բարձրակարգ մասնագետներ, ովքեր կրթություն են ստացել աշխարհի առաջավոր բուհերում, հարկադրված են մարզերից տեղափոխվել Երևան, որովհետև մարզերում չկան համապատասխան բարձրակարգ հաստատություններ, որտեղ կրանք կկարողանային աշխատել և կիրառել իրենց մասնագիտական հմտությունները:

Այժմ եզակի հնարավորություն է ստեղծված Վանաձոր քաղաքի կենտրոնական փողոցի վրա (Տիգրան Մեծի 1) կառուցել միջազգային չափանիշների մի կրթական կենտրոն:

Մարդու իրավունքների հայկական դպրոցը 12 տարի գործում է Վանաձորում՝ մասնագետներ պատրաստելով ու վերապատրաստելով բոլոր մարզերի և մայրաքաղաք Երևանի կրթական հաստատությունների համար:

Նոր ուսուցողական կենտրոնի կառուցումը Վանաձորում զգալիորեն կկայաստի երկրի զարգացման աշխարհագրական անհավասարաչափության նվազեցմանը, այդ վիճակի փոքր-ինչ շտկմանը:

Եթե ցանկանում եք Ձեր մասնակցությունն ունենալ այս կարևոր գործում,

նպաստել Մարդու իրավունքների կրթության զարգացմանը, ապա կարող եք

ՁԵՐ ԲԱՉԻՆ ԲԱՐԸ

դնել Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքի պատին՝ հատկացնելով ընդամենը 250 դրամ:

Գումարը կարելի է փոխանցել հետևյալ բանկային հաշվի համարին՝ 001-093392-001 ԷՋ-ԵՍ-ԲԻ-ՍԻ (HSBC) բանկում կամ պարզապես զանգահարել +374 (322) 22967 հեռախոսահամարով և տեղեկացնել Ձեր այդ ցանկության մասին:

ՀՀ, 2003, թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին կրթանցք, թիվ 2, կայքէջ՝ www.acrpc.am

Հայտարարություն

Հարգելի ընթերցողներ, տպագրության է պատրաստվում «Վանաձոր արդարաբեան» իրավական գիտամեթոդական հանդեսի հերթական համարը:

Հրավիրում ենք իրավագետ գիտնականներին, դասախոսներին, բարձր կուրսերի ուսանողներին՝ իրավունքին, մարդու իրավունքներին առնչվող թեմաներով գիտական, վերլուծական հոդվածներ ներկայացնել:

Գիտականության չափանիշներին համապատասխանող հոդվածները կտպագրվեն հանդեսում՝ պարզևատրվելով հոնորարներով:

Հոդվածները կարելի է ուղարկել հանդեսի խմբագրությանը հետևյալ հասցեով՝

ՀՀ, թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին կրթ., թիվ 2
 Հեռ.՝ +374 (322) 2-29-67
 Հեռապատման՝ +374 (322) 4-47-81
 Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
 Համացանցի էջ՝ www.acrpc.am

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում էլ կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության 9 տարի
 Հիմնադիր և հրատարակիչ
 Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
 ՀՀ, 2003, թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին կրթ., թիվ 2
 Հեռ.՝ +374 (322) 2-29-67
 հեռապատման՝ +374 (322) 4-47-81
 Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
 Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր պաշտոնակատար՝ Գևորգ Մանուկյան
 Խմբագիր՝ Զեմինե Բաբոյան
 Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան
 Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հիշումը «Իրավական մշակույթի» պարտադիր է:
 Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
 Ստորագրված է տպագրության 2007թ. 12. 13:
 Տպագրակը՝ 2000:
 Տպագրվել է «Չունգալ-97» հրատարակչատանը:

Իրավական մշակույթ
 Legal Culture
 Православная культура
 Տարածվում է անվճար